

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 30-ին, հինգշաբթի օրը, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի, տեղի ունեցավ վարդապետական թեզի պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներ, ուսանողներ և բազմաթիվ հյուրեր:

Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Ասողիկ աբղ. Արիստակեսյանը նախապես իր պատրաստած թեզը ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբության հանձնարարությամբ կազմված հանձնախումբը, որի կազմում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը (նախագահ), «Էջմիածին» ամսագրի խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Երվանդ Մելքոնյանը և Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Արտաշես Մաթևոսյանը, քննելով թեզը, իրենց զեկուցագիրը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին:

Վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունն սկսվեց ժամը 11-ին: Նախ իր կատարած աշխատանքի և ներկայացրած ուսումնասիրության մասին բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Ասողիկ աբղ. Արիստակեսյանը, որի թեզի թեման էր «Սողոմոնի տաղերը կամ քրիստոնեական հնագույն երգեր»: Ձեռնարկելով այս գործին, Հայր Ասողիկն իր առջև նպատակ էր դրել հայ ընթերցողին ներկայացնել վերոհիշյալ երգերի հայտնագործման ու ուսումնասիրման պատմությունը, ինչպես նաև դրանց հայերեն թարգմանությունը՝ ֆրանսերենից:

Բանավոր պաշտպանությունից հետո հանձնաժողովը Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի կատարած աշխատանքը գնահատեց «լավ»:

Օգոստոսի 1-ին, շաբաթ օրը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվեց վարդապետական աստիճանի տվչության արարողությունը: Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Տ. Ասողիկ աբղ. Արիստակեսյանին վարդապետական աստիճանի տվչությունը կատարեց գերաշնորհ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը: Արարողության ավարտից հետո սրբազան հայրը հետևյալ բովանդակալից խոսքն ուղղեց նորընծա վարդապետին.

«Հոգևորականը ձեռնադրության ժամանակ երեք ուխտ կկատարե.

ա. Ծառայել Աստուծո:

բ. Ծառայել Եկեղեցիին:

գ. Ծառայել Քրիստոսի բանավոր հոտին:

Ինչպես ասած է Ս. Գրիգոր Լուսավորիչ՝ «Ծառայք եմք ծառայիցն Աստուծոյ»: Պողոս առաքյալ կհայտարարե, թե՝ «Զորս ետ Աստուած յեկեղեցիս այս են. նախ զԱռաքեալս, երկրորդ զՄարգարէս, երրորդ զՎարդապետս» (Ա Կորնթ. ԺԲ 28): Հիսուս իշխանություն տվավ 12 առաքյալներուն քարոզելու Ավետարանը, մարգարեները գուշակեցին Մեսիայի գալուստը և վարդապետները իշխանություն ունին շարունակելու առաքյալներու պաշտոնը:

Այսօր հոգեկան ուրախության օր մըն է Մայր Աթոռին և մեզի համար: Հայ Եկեղեցվո վարդապետներու թիվին վրա նոր վարդապետ մը կավելնա հանձին Տ. Ասողիկ վարդապետին, որ պաշտոն ստացավ քարոզելու Ս. Ավետարանը և Հայ Եկեղեցվո ուղղափառ վարդապետությունը հայ հավատացյալներուն:

Հայ Եկեղեցին հավատարիմ մնաց Ս. Ավետարանին ու Քրիստոսի պատգամներուն և քարոզության: Հայ Եկեղեցվո աստվածաբան վարդապետները անաղարտ պահեցին Եկեղեցվո ուղղափառ դավանությունը և մերժեցին հերետիկոսներու և հերձվածողներու մոլար քարոզությունները:

Ինչպես Պողոս առաքյալ իր աշակերտին՝ Եփեսոսի Եկեղեցվո երեց Տիմոթեոսին կըպատվիրե, մենք ալ կփափագինք թելադրել Հայր Ասողիկ վարդապետին՝ «Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառոտել զբան ճշմարտութեան» (Բ Տիմ. Բ 15): Ավետարանի քարոզիչը իր խոսքեն ավելի իր կյանքի օրինակով պիտի ուսուցանե հավատացյալներուն Աստուծո խոսքն ու պատգամները՝ օրինակ ըլլալով հավատացյալներուն «բանիւք, գնացիւք, սիրով, հաւատով և արքութեամբ» (Ա. Տիմ. Դ 12):

Մի պահ տվչության արարողությունից

Կօրհնենք Հայր Ասողիկը և կմաղթենք, որ վարդապետական գավազանը միշտ ծաղկյալ մնա իր ձեռքին մեջ և ջանա առաջնորդել և մխիթարել հայ հավատացյալները շնորհոք Ս. Հոգվույն: Ամեն»:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Հայր Ասողիկին Հայ Եկեղեցու վարդապետի բարձր աստիճանին արժանանալու համար և հույս հայտնում, որ այսուհետև ևս նա իր ջանքերն ի սպաս կդնի Հայ Եկեղեցու բարգավաճման ու հայ ժողովրդի ծառայության արքազան գործին: